№ 116 ՅՈՒԼԻՍԻ 12 (24) 1878 ՅՈՒԼԻՍԻ 12 (24) № 116

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։

—

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

—

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

—

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով

—

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1878 Թւից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԷՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի ձեւը և պրօգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվանը 6 րուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ արաւ Անգլիան։—Ներքին տեսութիւն։ Նամակ Շամախուց։ Նամակ Երեւանից։ Նամակ Ախալքալաքից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հայերը և Անգլօ-Թիւրքաց համաձայնութիւնը։ Նամակ Գերմանիայից։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԻՆՉ ԱՐԱՒ ԱՆԳԼԻԱՆ

—

Մեծ խոստումներից յետոյ, որ անգլիացիները արել են Թիւրքաց հայերին, փառաւոր ընդունելութեանց յետոյ որ անգլիական պետական մարդիկ արել են հայ պատգամաւորներին,—ի՞նչ արին անգլիացիները հայերին....

Նրանք կապեցին մի գաղտնի համաձայնութիւն Թիւրքաց տէրութեան հետ, Թիւրքիայի ասիական երկիրների ամբողջութիւնը ապահովելու նպատակով, սեփականացրին իրանց Կիպրոս կղզին և յայտնեցին իրանց պաշտօնական թղթերում որ հայերը դեռ հասունացած չեն ինքնավարութիւնը վայելելու և որ կարգ և հանգստութիւն Ասիայում պահպանելու ուրիշ հնարք չը կայ, եթէ ոչ յանձնել կրկին Թիւրքիային կատարեալ իշխանութիւնը Փոքր-Ասիայում։

Պարզ է որ Թիւրքիայի այդ ջերմեռանդ պաշտպանները հոգում են ոչ թէ Թիւրքիայի մասին, այլ իրանց անձնական, առեւտրական շահերի մասին....

Անգլիան հասաւ իր նպատակին։ Նրա համար փոքրիկ ազգերի անհատական քաղաքական կեանքը նշանակութիւն չունի, նրա համար նշանակութիւն ունի միայն իր սեփական նիւթական շահը....

Հայերը Անգլիայի անսիրտ, վաճառականական քաղաքականութեան զոհ դարձան։

Այժմ կարելի է ասել որ ամբողջ Հայաստանը և ամբողջ Փոքր-Ասիան Անգլիայի ձեռքումն է։ Անգլիան տիրապետեց այդ ամբողջ երկիրները։ Այժմ էլ ոչ ոք հերքել չէ կարող որ Անդրկովկասին սահմանակից երկիրները կառավարում է ոչ թէ Թիւրքիան, այլ Անգլիան, էլ ոչ ոքին գաղտնի չէ որ Ռուսաստանի ասիական սահմանների հարեւանը Թիւրքիա չէ, այլ Անգլիան է։

Այժմ պարզ երեւում է որ Ռուսաստանի շահերը պահանջում էին քաղաքական կեանք տալ Հայաստանին, իսկ Անգլիայի շահերը պահանջում էին խեղդել հայոց ազգի մէջ ձգտում դէպի քաղաքական կեանքը։

Ռուսաց հասարակական կարծիքը և ռուս մամուլի ամենանշանաւոր օրգանը, «Голосъ» լրագիրը, հասկացել են այդ ճշմարտութիւնը։

Յոյս ունենանք որ Ռուսաստանը կաշխատէ իրագործել «Голосъ» լրագրից յայտնած ազնիւ, մարդասէր և ճշմարիտ գործնական մտքերը հայերի վերաբերութեամբ, աչքի առջեւ ունենալով այդ գործի մէջ թէ ռուսաց պետական շահերը, որոնք պահանջում են Հայաստանին ինքնավարութեան տալը, թէ նոյն իսկ հայոց ազգի բաղձը և օգուտները։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

5 յուլիսի

Բժշկականութիւնը մեր քաղաքում գլխաւորապէս դալլաքների ձեռին է գտնվում։

Դալլաքը՝ հասարակութեան այդ տզրուկը որ անխնայօրէն ծծում, քամում է ժողովրդի արիւնը, անկիրթ մարդկութեան ամենապականված և աղճատված տիպարն է։ Նա չունի բարեկամ, չունի և ազգական, բարոյական ազդումների այդ երկու անբաժան ընկերքը ոչինչ յարաբերութիւն չունեն նրա սրտի և հոգու հետ, թէ մեկը և միւսը եթէ չեն ծառայում նրան իբրև միջոց նիւթական շահերի, չունեն և էութիւն նրա համար։

Նա ամեն տուն մտնում է, նրան ծանօթ են քաղաքի բոլոր ծակ ու ծուկը, ընտանեկան ամենափոքրիկ մի անցք չէ կարող ծածկվել նրա սրատես աչքից, ամեն հանգամանքի միջից—ինչպէս ասում են, նա իր ճրագի համար պատրույկ է որոնում։

Իբրև մարմնաւոր բժիշկ նա չէ զլանում և իր ծուխերի հոգու բժշկութեան համար. Նրա խանութը մի կատարեալ լաբիւրինթոս է կրօնական գրքերի։ Աստուած, Յիսուս Քրիստոս, Մարիամ կոյս նրա խօսքերի առաջաբանն և վերջաբանն են։ ինչքան սիրող հնութեան, նոյնքան աջող է նա նորութեան։

Միշտ եկեղեցի յաճախել, քթի տակ աղօթքներ մրմռալ, անգործ ժամանակ աւետարան կարդալ, իր խանութը յաճախողների գլուխը դատողութիւններով բուղել,—այդ մի սրբազան պարտաւորութիւն է նրա համար, որովհետև այդպիսի միջոցներով միայն նա կարող է ժողովրդի համակրութիւնը վայելել.... Բայց թէ ինչ դեր է խաղում նա հասարակութեան մէջ, ինչ պաշտօն ունի, այդ մի դժուար լուծելու հարց չէ։

Նա բժիշկ է—դօկտոր է, բուժող ամենայն հիւանդութիւնների և ցաւերի։ Ամեն մի հիւանդութիւն, որից զուցէ ամենաերևելի բժիշկները կարող էին յուսահատվել, նրա համար ոչինչ է։

Գիրք Լօղմանի, տանու բժիշկ, կազմում են նրա բժշկական գիտութեան երևելի աղբիւրներ, որոնցից նա դուրս է ծորում իր անսպառ շնորհքը։

Եթէ ունես դու հիւանդ, մինչև նրան կանչելդ, նրա անախորժ պատկերը, բիզտած արխալուղը, որի վրայից մի կաշու փոքրիկ պարկի մէջ քարշ է արած իր արհեստին վերաբերեալ գործիքները, երկայն չուխայով պատանքված ձիգ իրանը, և ահագին փափախի տակ հեծեծող գլուխը իսկոյն կը նկարվի դրանդ մէջ, նա կարծես զուշակած էր որ դու պէտք է հիւանդ ունենաս։

Նա քնքոյշ մօր նման նստում է հիւանդի բարձի մօտ (ծիծաղելի է մանաւանդ այս ժամանակ նրա դիրքը նկատել)։

Ցոյց տալու համար իբրև թէ ինքն էլ մի բան հասկանում է, հրամայում է հիւանդին որ լեզուն հանի, կուրծքին ականջ է դնում, երակի զարկերը համարում է, թքել է տալիս և այլ այսպիսի հազար ու մի կապիկութիւններով աշխատում է ցոյց տալ որ այն ինքը ևս տեղեկութիւն ունէ բժշկականութենից....

Այնուհետև նա սկսում է գովասանութիւններ թափել իր գլխին։

Թօղոսեանց Առաքելը մի տարի է որ հիւանդ էր, էլ շատ դօկտոր կանչելուց, էլ շատ դեղ անելուց համբերութիւնը կտրվել էր, վերջում դօկտորները բոլորովին յոյսերը կտրեցին նրանից, յայտնեցին որ շատ շատ մի երկու օր հազիւ ապրի, բայց ինքը գնաց հիւանդին նայեց և երեք օրում այնպէս առողջացրեց որ կարծես թէ մօրից նոր սւործված լինէր։

Նոյնպէս Ղարգեօզանց Սամսոնի աչքի մի հատ սեւ ու սպիտակ երեխան, դօկտորները այն օրին էին հասցրել որ խեղճը էս ա այս սահաթին, միւս սահաթին հոգին պէտք է տար, բայց էլի ինքը հրեշտակի նման հասաւ, երեխային առողջացրեց և տվաւ իր հօրը։ Էհ, էլ որ մեկը ասէ, հազարաւորներ այդպէս պատահած են, որոնց դօկտորները մահվան դուռն են հասցրած, իսկ ինքը ամենին էլ փրկած է։ Դուշմանս դօկտորների ձեռքը չընկնի, նրանք մարդի տունը կը քանդեն, նրանցը նա է որ մի հասարակ ջուր տան, երկու կամ երեք մանէթ փող առնեն, ինչներին է հարկաւոր թէ հիւանդը ինչպէս կը լինի, կը մեռնի թէ սաղ կը մնայ, բայց ինքը, չէ, ինքը այնպէս չի անի, նա այնպէս ճար կը տայ որ շատ էժան կը լինի և հիւանդն էլ շուտ կառողջանայ։

Կեցցէ պարոն դալլաքը, ինչ էք կարծում նա իր խօսքի վրա հաստատ է, 3 կոպէկի դառնշնարդ, 4 կոպէկի սինջապ, 5 կոպէկի քալմաչիաթ, 2 կոպէկի ղաղմին, 6 կոպէկի դուրսաթ և այլն, միասին խառնելով այնքան սեղմում է հիւանդի բողազը, որ խեղճի աչքերը չը փակված է խաւարում։

Բայց նայեցէք, նա մտնում է մի ուրիշ տուն։ Հիւանդին շրջապատող կանայք ոտքի են վեր կենում.—Նստեցէք ուստայ։—Նա նստում է։

—Ինչպէս երևում է այս խեղճը տաքացրած պէտք է լինի, ասում է նա հիւանդի ձեռը բռնելով,—որ կրակի նման այրվում է տաքութեան մէջ—հա էլի, խեղճը տաքացրած է, կրկնում է նա գլուխը թափ տալով։

—Հա ուստա հոգուդ մատաղ, երեխաս շատ խարաբ է, մին ճար արայ, ոտքիդ տակին մեռնեմ, ջանս քեզ ղուրբան, աղերսում է մի պառաւ կին, որ հիւանդի մայրն է։

—Էհ միամիտ կացիր, յոյս է տալիս պ. դալլաքը, նրա առողջութիւնը իմ ձեռքիս է, միթէ քեզի յայտնի չէ որ ես եթէ ուզենամ մեռելն էլ կառողջացնեմ։ 3 մանէթ փող ուղարկիր մէկ էլ մէկ շուշայ, մի քիչ բաղամի եղ կը տամ, մէկ էլ մէկ քանի սուլիւկ։ սուլիւկը կը խփես ճակատից որ ճակատը շատ տաք է, բալքի տաք արիւնը դուրս քաշի, բաղամի եղն էլ կը խմացնես որ տաքութիւնը ներս տայ.... եթէ սա էլ չօգնի, յետոյ ես կը գամ էլի... Մի քանի ժամից հիւանդը փոխված է լինում յաւիտենականութեան օթևանը։ Իսկ գիշերը մի գեղեցիկ հակապատկեր է ընծայում հիւանդի և դալլաքի տանը։ Դալլաքը իրան այն օրվայ աշխատած 3 մանէթը ուրախ ուրախ փողի կապոցումն է դարսում, մինչդեռ այստեղ մի յուսահատ կին, սրտի կսկծից է մորմոքվում, իր անդառնալի կորստի՝ միակ որդու մահվան համար։

Բայց թէ իւրաքանչիւր տարի քանի քանի այդպիսիներն են զոհ դառնում անկիրթ դալլաքի փորձերին, այդ շատ դժուար է հաշվել։

Ա. Զախարեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

1 յուլիսի

Երկրորդ անգամ բաղդ ունեցայ հանդիպելու ս. Էջմիածնի եպիսկոպոսական ձեռնադրութեանը։ Ես մտածում էի արդարև որ իմ մանկական յիշողութիւնների և Էջմիածնից գրած մեռոնի օրհնութեան մասին յօդուածներիս հատերի սիրտը վիրաւորած ու չահած պէտք է լինեմ։ Բայց իմ խիղճը արդար էր, որովհետև այդ դէպքերում բնաւին չէի շեղվել իմ արդարացի նկատողութիւններից։ Եթէ մենք քայլ առ

քայլ ամեն մի այսպիսի տխուր երևոյթների վրա սառն աչքով նայելու լինենք, ուրեմն չը պէտք է գրիչ վերցնենք։ Վերջապէս եթէ մըտածենք ամեն բան զանցառութեան տալ, կամ այսպէս ասել՝ սուղել՝ չատերի սիրտը չահած կը լինենք։ Եթէ մենք ամենի վրա չահասիրական ակնարկ ձգէինք, այն ժամանակ ռամկօրէն այս երկու հակառակ առածները պէտք է առաջ բերենք.—«մի հատ մազ որ չես կարող ստեղծել՝ ուրեմն ինչպէս ես յանդգնում մրջիմը ոտի տակ տրորել։» Այս առաջին առածը քարոզում է մեզ, որ ոչ մէկի խաթրին էլ չը պէտք է դիպչենք։ Իսկ երկրորդը քարոզում է միշտ չարժողութիւններ։ —«Քար քարի խփելիս՝ անպատճառ կրակ դուրս կը գայ։ Ահա այսպէս երկու հակասական առածներն էլ լաւ ու վատ տպաւորութիւններ են կնքել ժողովրդոց սրտերի մէջ,—մինը մեռելութիւն—իսկ միւսը կենդանութիւն։ Մենք այսպիսի շատ օրինակներ ունենք։ Վճռում էի ինքս ինձ որ անկարելի է գրիչ վեր չառնել, անկարելի է որ և է պակասութեան դէմ չը բողոքել։ Գրելու մի գեղեցիկ նպատակն էլ այս է—որ թիւր ուղղութիւն ունեցողները պարբերական հրատարակութիւնների միջոցով՝ ստիպված հետաքրքրվում են գտնել կարդալ այն լրագիրները և կամ ստանալ։ Եւ ինչ էք կարծում. հէնց այդ կողը նրան մտանայ եղած՝ նա զինվում է գրողի դէմ գրիչ վեր առնել, իսկ եթէ չէ աջողվում կամ թէ իրան խելքով որպէս թէ աջողվեց... Աստուած հեռու տանի, թէ ինչ մեծ մեծ փրթոչներ է անում և ուղղակի տպագրութիւն ուղարկում բայց դու արի տես թէ հակառակ դէպքում, սուր սուր պատասխաններ էլ է ստանում, աւելի հարված դրութեան մէջ է մնում։ Ոչ. նա դրանով էլ չէ հովանում. թէև մի կարճ միջոցում խռովում յուսահատվում է, այնու ամենայնիւ ընթերցասիրելու համոզմանն է հասնում։ Այսպէս նա հետզհետէ մի քաղաքից կամ գիւղից ժողովրդական լայն ու նեղ շրջանների մէջ էլ մուտ գործելով և ուշադրութիւնը արթուն պահելով նոր նոր լուրեր է ժողովում ու ուրախ ուրախ օրագրթերթին ուղարկում։ Այսպէս գրականութեան ափերին մօտեցած՝ ընդարձակում է ասպարէզը։ Այս բոպէում Երևանի, Վաղարշապատի քանի քանի պատանիներ ու նոր նոր երիտասարդներ այսպիսի հարված դրութեան մէջ են, որոնց չատերին իսկ ծանօթ լինելով, տեսնում եմ որ իրանք անդադար կարդում, գրում, ջնջում են։ Իմ խորհուրդը մի քանիներին այս է եղել,—նախապէս կարդալ, կարդալ այնքան՝ մինչև լեզուն լաւ մշակեն։ Իմ այսքան մեկնութիւններից ու դատողութիւններից յետոյ, երբ միաբանութեան լայն գաւթի մէջ իմ մի քանի ծանօթների հետ չրջելով սպասում էինք Վեհափառ հօր վեհարանից ցած իջնելուն՝ մէկը ինձ ասաց. «այս ինչ պ-ը զինվել է ձեր դէմ պատասխանելու։ Իսկ երկրորդը որի համար հրապարակաւ չնորհակալութիւն էի յայտնել՝ նա խրախուսված մօտեցաւ իմ չնորհակալութեան փոխարէն իր խորին չնորհակալութիւնը յայտնեց։ Ես այն եզրակացութեան էի հասնում, որ իմ բոլոր մտածածները սուտ չեն եղել։—Մէկը վիրաւորված... միւսը խրախուսված... երրորդը պատասխանելու զինուած...-գուցէ մեր սառը խօսակցութիւնները երկար էին և աւելի մի տաք վիճաբանութեան հասնէին՝ եթէ Նորին Վեհափառութեան վեհարանից ցած իջնելը և տաճար գընալը չընդհատէր, ուր այնտեղ պատրաստ էր նոր եպիսկոպոսացուն։ Մենք հետևեցինք մեր հօրը մինչև ս. տաճարի մէջ։ Հանդիսականների թիւը չատ փոքր էր, մեզ աջողում էր լաւ տեսնել այդ տեսարանը։ Լսել էինք որ ձեռնադրվողները երեք են, բայց միայն մէկին տեսանք, այն էլ տաճկաստանցի։ Միւս երկուսը Սինոդի անդամ Տէր-Մատթէոսեան և Խուդավերդեան վարդապետներն էին։ Հանդիսաւոր ձեռնադրութիւնը սովորականին համեմատ վերջանալուց զէնի՝ մենք բաղդ ունեցանք տեսնել և Թանգարանը, այն Թանգարանը, որի համար ամեն մի ճանապարհորդողի և տեսնողի աչքն է հիանում և մի պատմական յիշատակ կազմում։ Թանգարանը ունի արդարև իր մեծ նշանակութիւնը, գրված է իր բազմադարեան սքանչելի հնութիւններով։ Թանգարանը մեր նախկին հանգուցեալ կաթողիկոսների ժամանակ չէ ունեցել այն արժանաւորութիւնը՝ ինչ որ ունի այժմ։ Այս անգին Թանգարանը որ այսպիսի վերանորոգութիւնների չատ ու չատ կարօտ էր, հեռաւոր տեղերից այցելող հայ ուխտաւորների և օտար ճանապարհորդող ազգերի առանձին ուշադրութիւնն էր իր վրա հրաւիրում։ Այս նուիրական սուրբ տեղը ներկայացնող ղայսուն սիրտը իր վերջին կարօտալի ջերմ համբոյրները մի քանի անգամ անյագ չրթունքներով դրոշմելուց զէնի թողնում և հեռանում է չարժված սրտով։ Ես տեսայ այստեղ այն գրչագիր աւետարանը՝ որին ամենափրկիչ են ասում։ Այդ աւետարանը Էջմիածնից 10-վերստ հեռաւորութեամբ Աղջաղարայ գիւղի Սարդար անունով մարդու տան մէջն էր այն ժամանակ որի համար ջերմաջերմ եռանդով մեծամեծ զոհերով շրջակայ գիւղացիները և մեծ մասամբ երևանցիները դիմում էին այդ թափուր դուռը։ Ամենափրկիչը որին նուիրված են երևանցիները, չեմ սխալվի եթէ ասեմ,—թողէք այդ թափուր դուռը՝ դիմեցէք այնտեղ՝ ուր այժմ տեղափոխված է—սուրբ Էջմիածնի Թանգարանի մէջ դրսի սենեակում։ Գնանք այնտեղ, ոչ միայն մեր ամենափրկչին կը մօտենանք՝ կը մօտենանք շատ սրբոց մասունքների, կը մտնենք ներս՝ և կը տեսնենք մեր վեհ Թանգարանը, որը հայերի համար մեծ պարծանք է։ Մինչ դուք մոռանում էք ձեր ասածը որ ամեն մի բերանից լսվում է. «համ զիարաթ համ թուշարաթ»։ Մանաւանդ դուք որ դրացիներ էք Էջմիածնի, մինչ պատիւ չի բերի ձեզ տեսնել ձեր Թանգարանը և մի հաստատ գաղափար կազմել։ Ես կարող եմ պարզ ասել որ Երևանի $^1/_4$ մասը հազիւ տեսած լինի Թանգարանը, իսկ մնացած $^3/_4$ը երկու օրով ճանապարհ ընկած հեռու տեղերն են ուխտագնացութեան գնում, այն ինչ հեռաւոր տեղացիները Թանգարանի կարօտն են քաշում։ Այսքանն էլ բաւական էր երևանցիների համար։ Այս մասին եթէ ես չը գրէի՝ երբ և իցէ մի օր Երևանի հաստատ նամակագիր պ. Ա. ԵՐԸ կը գրէր։ Բայց նա այժմ գնացել է ամարանոց։

Շ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

5 յուլիսի

Ախալքալաքը երեք կողմից չրջապատած է ձորերով, որոնց մէջ հոսած վտակները ջուր են մատակարարում մեր քաղաքի բնակիչներին։ Քաղաքի մէջ աղբիւրներ և ջրհորներ չը կան։ Բարձրաւանդակ դիրքի պատճառով ջրհոր փորելը շատ և շատ դժուար է։ Անցեալ տարիներում մեծ դժուարութեամբ մի ջրհոր փորեցին բերդի մէջ, որ քանի սաժէն խորութիւն ունի և ջուրը հանքային նիւթերից բաղադրված լինելով դառնահամ է։ Այդ ջուրը գործ են ածում չորեղէններ լուանալու համար։ Մեր քաղաքում ջուր բերելու մասին շատ խօսած են, մինչև անգամ ջուրը Տիլիֆ գիւղի մօտից բերել հասցրել են մինչև Նամզարա գիւղը (որտեղ այժմս էլ հոսում է այդ ջուրը) և այդպէս կիսակատար Թողել են։ Պատճառն այն էր որ ծախսի համար հարկաւոր եղած գումար և աշխատանքներին ուղղութիւն տուող մասնագէտներ չը կային։ Զրբերները ջուր են բերում փայտից փորած առանձին ամաններում, որոնց չորսը արժէ ձորելի մօտ գտնված փողոցներում 5, իսկ հեռաւորներում 10 կոպէկ։ Գլխաւորապէս դժուարութիւնը ընկնում է քաղաքի աղքատ դասակարգի ժողովրդի վրա։

Ամսի 1-ին պ. նահանգապետի ցանկութեան համաձայն, քաղաքիս առաջաւոր անձերից երեսուն մարդ ներկայացան նրան։ Սրանից երկու տարի առաջ մեր քաղաքում դիտաւորութիւն կար մի փոխատու-խնայողական դրամարկղ (касса) հիմնել, բայց պատերազմը արգելք դարձաւ դրա իրագործվելուն։ Պ. նահանգապետը համառօտապէս բացատրելով յիշեալ դրամարկղների օգտաւէտութիւնը, խորհուրդ տուեց հիմնել դրան։ Քաղաքի ներկայացուցիչները խոստացան կատարել նահանգապետի առաջարկութիւնը։ Նրանք երեք խնդիր առաջարկեցին նահանգապետին՝ 1) ուղարկել մի մասնագէտ ատիճանաւոր ջրանցքի նախագիծը կազմելու և աշխատանքներին վերահսկելու համար, 2) թոյլատուութիւն տալ երեք դասատնից բաղկացած քաղաքային ուսումնարան ունենալու և 3) որովհետև արքունական գանձարան (Казначейство) չը կայ այստեղ և դրա համար Ախալցխայ գնալ գալը մեծ անյարմարութիւնների և ծախսերի հետ կապված է, խնդրեցին գանձարան հիմնել այստեղ։

Պ. նահանգապետը խոստացաւ գործ դնել բոլոր իրանից կախված միջոցները նրանց խընդիրքը կատարելու համար։

Խ. Մառանկոզեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի ծխական դպրոցի ուսուցիչը հրաժարվել է իր պաշտօնից, իսկ հոգաբարձութիւնը չէ հոգում նրան փոխարինել։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ հաղորդում են, որ մի քանի օր առաջ Մոսկվա-Պետերբուրգեան երկաթուղու Ակուլովկա ստանցիայի մօտ գետի մէջ լողալու ժամանակ խեղդվեց Ս. Տէր-Յարութիւնեան երիտասարդը, որ իր ուսումը աւարտել էր Ներսիսեան դպրոցում և այդտեղ պատրաստվում էր բարձր ուսումնարան մտնելու համար։

—

ԳԱՆՁԱԿԻՑ ստացանք յօգուտ Արարատեան ընկ. հետևեալ անձինքներից ստորագրութեամբ հաւաքած 8 ր. 15 կ.։ Առուշանեանց 1 ր., Վ. Գրիգորեանց 50 կ., Ա. Յարութիւնեանց 50 կ., Մ. Ղաբուզեանց 1 ր., Մ. Ղալիչեանց 1 ր., Մ. Սէյրանեանց 50 կ., Յ. Բաբուջեանց 40 կ., Ս. Դանիէլեանց 50 կ., Պ. Յարութիւնեանց 50 կ., Յ. Բալաղեանց 1 ր., Գ. Մկրտումեանց 1 ր., Ս. Ազաբէգեանց 50 կ.։ Փոստի ծախս 25 կ. դուրս գալով, մնում է 8 ր. 15 կ.։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են, որ այնտեղի օրիորդաց ուսումնարանի չինութիւնը չուտով պատրաստ կը լինի։ Աշակերտուհիների թիւը հասնում է մինչև 60, նկող ուսումնական տարվայ համար Նուխու երկսեռ ուսումնարանի համար հարկաւոր են 4 ուսուցիչներ։

ԱՐՏԱՔԻՍ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱՑ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

—

«Голосъ» լրագրում կարդում ենք հետեւեալը։

«Եւրոպայի պատմութիւնը հարստացաւ էլի մէկ խայտառակ էջով. մի պետութիւն որը պարծենում է իր ազատ հիմնարկութիւններով, դաշն կապեց ամենաբարբարոս բռնակալութեան հետ, դաղանութիւնները և ինքնակամութիւնը պաշտպանելու համար։ Անգլո-Թիւրքաց դաշնադրութեան պատուղները, որոնք ապահովում են սուլթանին իր ծայրագոյն իրաւունքները, արդէն սկսվում են յայտնվել։ Անգլիական քաղաքականութեան սիրած զաւակները—վայրենի յափշտակողները, սկսեցին իրանց ոչնչացնող գործը, այժմեանից ոչ թէ միայն Բ. Դրան հովանաւորութեան ներքոյ, այլ և նրա նոր դաշնակցի—ազատ Մեծն-Բրիտանիայի։ Այն ժամանակ երբ յամօթ Անգլիայի նրա ներկայացուցիչների մէջից թնդում է գովասանական գինկրդութիւններ Թիւրքիայի յափշտակողներին և վայրենիներին՝—քուրդերին, չէրկէսներին, լազերին և այլ խաղնիճաղանձներին, որոնք կողոպտութիւններով են ապրում, և քրիստոնեայ ու քաղաքակիրթ ազգերի բնական իրաւունքներն են հերքվում, այն ժամանակ երբ Բ. Դուռը սիրտ առնելով Կ. Պոլսի հայոց պատրիարքից պահանջում է յետ կանչել Բերլինից հայոց պատգամաւորներին, Հայաստանը կրկին բռնաբարութեան և սպանութեան ասպարէզ է դառնում։

«Վանի՞ սանջակում—ինչպէս հաղորդում է մեր Էրզրումի թղթակիցը—քուրդերը, ամեն պատահած բանով զինուորված, սկսած կայծքար ունեցող հրացաններից մինչև Ուինչեստէր և Հէնրի Մարտինի ամենակատարելագործված հրացանները, սարսափելի կողոպտութիւններ և ամենակարելի բռնաբարութիւններ են կատարում անզէն հայերի վրա։ Թիւրքաց կառավարութիւնը բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում թշուառ հայ ազգաբնակութեան գանգատների վրա։ Նորերումս Վանի սանջակի նահանգապետը Վանի հայոց եպիսկոպոսին հեգնաբար խորհուրդ տուեց օգնութիւն որոնել Խորէն Նարբէյի մօտ Պետերբուրգում։

«Այս պատասխանը բացատրում է անգլօ-թիւրքաց դաշնադրութիւնը։ Այդպիսի դէպքերում Բ. Դրան պաշտօնեաները աշխատում էին սկզբից բռնաւորութեան փաստերը հերքել, յետոյ առհասարակ խոստանում էին քննութիւն և յանցաւորներին պատժել, իսկ այժմ ապահովելով իրանց զօրեղ դաշնակցով, նոքա հեգնական կերպով են վարվում և յարձակվել են տալիս խաղաղ բնակիչների վրա Մեհրալիի նման, փախած տաժանակիր աշխատանքների դատապարտվածին, որը մեր սահմանագծին շատ մօտիկ տարածութեան վրա գտնվող հայ քահանային սպանեց և անլսելի բարբարոսութիւններ կատարեց նրա ընտանիքի վրա (նայել № 174 «Голосъ»-ի) Կարող էր արդէօք երևակայել Ղարսի բանդապետը, շղթաներ հագցնելով այս Մեհրալիին, որը Սիբիրիա էր աքսորված գողութեան և մարդասպանութեան համար, որ նրան բարձր պատիւ կընկնի ներկայ գտնվել նորին մեծն-բրիտանական մեծութեան շահերի ապագայ ըմբշի զարդարվելու ժամանակ....

«Այն ժամանակ, երբ քուրդերը Բ. Դրան և նրա նոր դաշնակցի հաճութեամբ ձգտում են ոչնչացնել Փոքր-Ասիայում թշուառ քրիստոնեաներին, անգլիական գիտական շրջաններում գտնվեցան ձայներ, Բրայսի և Բուլինսօնի նման, որոնք վերկացան Հայաստանի վիճակի բարեկարգութեան դէմ։ Այս գիտական մարդիկը, կուսակցութիւնների քաղաքական ձգտումներով կուրացած, գտնում են որ Հայաստանը մինչև անգամ ինքնավարութեան անընդունակ է։ Նոքա մոռացան և չեն կամենում յիշել որ Կիլիկիայի հայոց թագաւորութեան մնացորդը, Զէյթունի դաշնակցութիւնը, մինչև այժմ հերոսաբար պաշտպանում է իր անկախութիւնը Թիւրքաց յափշտակող փորձերի դէմ։ Նրանք կը ցանկանային, եթէ կարողանային և Մխիթարեան միաբանութեան ծառայութիւնները հերքել, որը և այս ժամին պարծանքով պատուաւոր տեղ է բռնում արևմտեան Եւրոպայի գիտական միաբանութիւնների շարքում....

«Հայերը ինքնավարութեան ընդունակ չե՞ն։ Այն հայերը, որոնք դարերի երկար շարքեր անցկացրին և պաշտպանեցին իրանց գոյութիւնը, կարծես, անյաղթելի արգելքների մէջ, չը կորցնելով երբէք հաւատ ոչ իրանց սեփականեցրած քրիստոնէական քաղաքակրթութեան սկզբունքների մէջ, ոչ իրանց բարոյական ուժերի մէջ, ոչ իրանց բարձր կոչումի մէջ՝ այս սկզբունքների ներկայացուցիչներ և միջնորդներ լինել Ասիայի խորքում, ուր Հակստհաուզէնի խօսքերով «վիճակված է նրանց դէպի կեանք հրաւիրել մտաւոր կեանքի համարեայ թառամած սերմերը։»

«Թիւրքաց Հայաստանում, իրանց մայրենի հողի վրա, հայերը այժմ բնակվում են թուով 4,000,000 հոգի. հայոց ազգաբնակութեան ամենանշանաւոր մասը մշակում է իր նախնիքների մայրենի դաշտերը. իսկ քաղաքի ազգաբնակութիւնը պարապում է արհեստներով և վաճառականութեամբ. կայսրութեան ներքին առուտուրը համարեա բոլորը նրանց ձեռքին է, իսկ ինչ որ արտաքին վաճառականութեան է վերաբերում, նոքա յոյներից յետոյ առաջին տեղն ունեն բռնած։ Նոքա բազմաթիւ ձրի ուսումնարաններ ունեն և հայոց պարբերական մամուլը մի քանի տասնեակ օրգաններ ունի։ Հէնց անգլիական ճանապարհորդների հաստատութեամբ, ոչ միայն Թիւրքաց Հայաստանի սահմաններում, բայց և ամբողջ Փոքր-Ասիայում հայերը աշխատութեան և առաջադիմութեան միակ տարր են, երկրի միակ արդիւնաբերող ուժերն են, այն ինչ նրանց մէջ բնակվող քուրդերը, չէրկէսները

և այլ մահմեդական օտարազգիքը ներկայացնում են յափշտակող տարր և հայկատակներ, որոնք ապրում են հայերի հաշվով և արդելք են դառնում նրանց քաղաքական կեանքի զարգացման։

«Հայերի, մանաւանդ գիւղական ազգաբնակութեան բարոյական յատկութիւնները, արժանանում են ճանապարհորդների հիացած գովասանութիւններին։ Լամարտինը, իր «Voyage en Orient» գրքի մէջ, մի քանի համակրական երեսներ է նուիրում հայոց ընտանեկան կենցաղավարութեան. Մօլտկէ, իր «Նամակներ Թիւրքիայի մասին» գրուածների մէջ, հաստատում է, որ հայերը կարող էին ամենալաւ զօրքը կազմել Թիւրքիայի մէջ։ Վուտցերը իր «Reise in den Orient» գրքվածքի մէջ գովասանութեամբ է խօսում հայոց եռանդի, ընդունակութիւնների և բարոյական յատկութիւնների վերաբերութեամբ։ Հայերը Փոքր-Ասիայում—միակ քաղաքակիրթ ժողովուրդ են, որի ապագայ վիճակի մասին հարկաւոր է հոգալ ոչ միայն յօգուտ մարդկութեան, բայց և մեր սեփական քաղաքական նպատակների համար։

«Եթէ Անգլիան, իբր հովանաւորող Փոքր-Ասիայի, աշխատում է ամրանալ մեր սահմանների մօտ, որտեղից կարող է թափել մեզ վրա յափշտակող և մեզ թշնամի մահմեդական ցեղերին, մեզ հարկ չէ լինում դցել բաղդի բերմունքին միակ մեզ հաւատարիմ քրիստոնեայ ժողովրդի վիճակը ասիական Թիւրքիայում։ Շատ ցանկալի կը լինէր, որ Սան-Ստէֆանոյի դաշնագրութեան յօդուածի հիման վրա, հէնց այժմից ձեռնարկէր Հայաստանի այնպիսի կազմակերպութեանը, որը տար նրան կարողութիւն սկսելու ինքնուրոյն քաղաքական կեանք։ Ներկայ հանգամանքում ամենանշանաւոր խնդիրը կազմում է տեղական զինուորված ուժերի կազմակերպութիւնը։ Դժբաղդաբար այս հարցը բարձրացրած չէր իր ժամանակին մեր զօրքերի սահմանը անցնելու օրը։ Բայց և այժմ դեռ ևս ուշ չէ։ Տեղական զինուորված ուժերի մէջ, հարկաւոր դէպքում, եթէ Բերլինի կոնգրէսին վիճակված է անպտուղ մնալ, ռուսաց զօրքը կը դանի նոյնպիսի օժանդակութիւն, որպիսին ցոյց տուեցին բոլգարական գունդերը։ Իսկ եթէ բաղդաւորապէս, պատերազմ չի լինի, այս զինուորված ուժերը Վանի նահանգապետին յետ կը սովորեցնեն կատակ անել հայերի իրաւունքի, պատուի և արժանաւորութեան վրա...»

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Բերլին, 11 յուլիսի

Բերլինը այժմ այնքան բազմակողմանի ինտերէսների կենտրոն է դարձել, որ դժուար է մի թղթակցութեան մէջ բոլոր հետաքրքիր հարցերը և անցքերը ամփոփել։

Կոնգրէսը մի կողմից իր վրա ձգում է ամենքի ուշադրութիւնը, որովհետև նա հաստատուն վճիռ պիտի տայ արեւելեան հարցի առիթով եղած անհամաձայնութիւններին, պիտի պայմաններ որոշէ որոնք հիմք կը լինեն Եւրոպայի նոր, հաշտ (?) կեանքի համար։ Կոնգրէսը գրեթէ իր պաշտօնը կատարեց՝ գուցէ էլի երկու նիստ և այնուհետև բոլոր բարձր հիւրերը կրկին կը հեռանան այստեղից։ Նրանց տեղ կը բունեն զանազան մասնաժողովներ մանրամասներ վճռելու համար, որոնք կամ այստեղ պիտի իրանց նիստերը չարունակեն, կամ պիտի գործեն բուն այն տեղերում, ուր նրանց գործունէութեան նպատակն է։

Այլ կողմից Բերլին նմանապէս անբնական դրդուած տեսք է ստացել այն յուզմունքների պատճառով, որք այժմ կատարվում են գալու ընտրութիւնների առիթով։ Կուսակցութիւնները, ինչպէս նրանք առաջ կային լուծվեցան, նորեր կազմվեցան, պահպանողականները զայրացած են ամենայն աղատական մի ցոյցի համար, ազատականները զուռում են, որ պահպանողականները ուզում են յետադիմութիւն մտցնել երկրի մէջ. սոցիալ-դէմօկրատները լուռ են, երևի վախենում են բացարձակ դուրս գալ, իսկ ծածուկ կերպով երևի չարունակում են գործել. իսկ միակ կուսակցութիւնը որ գիտէ սրանից օգտվել կղերականներն են՝ նոքա բղաւում են, որ միակ միջոց նրբացնելու և մաքրելու ազգի ընկած բարոյականութիւնը, կրօնն է (և որովհետև իրանք կաթոլիկ են, այս յատկութիւնը գտնում են միայն կաթոլիկ դաւանութեան մէջ)....

Այս ամբողջ խառնաշփոթ ժամանակում միայն մի բան չէ մոռացվում՝ այն ամօթալի երկու փորձերը որ եղել էին կայսրի կեանքի դէմ։

Այսօր եղեռնագործներից մինը, առաջինը, Հէօդէլ ներկայացաւ վերջապէս պետական դատաստանի առաջ։ Երեսուն և երեք վկաներ ներկայ եղան և ցոյցեր արին ընդդէմ Հէօդէլի։ Նիստը սկսվեցաւ 9 ժամին առաւօտեան, իսկ վճիռը տրվեցաւ 4½ ժամին. Հէօդէլը մահի դատապարտվեցաւ։ Ներկայ գտնվողները պատմում են որ դատապարտվածը շատ յանդուգն էր վարվում դատաւորների հետ և անքաղաքավարի պատասխաններ էր տալիս։ Նա հաստատեց որ սոցիալ-դէմօկրատների հետ մոտ յարաբերութիւն չունէր, այլ պատկանում էր այն կուսակցութեան որ իրան անարխիական (անիշխան) է անուանում. Վկաների ասածները Հէօդէլը մեծ մասամբ չէր ընդունում, նրանց սուտ անուանելով։

Միւս եղեռնագործը Նոբելինգ, դեռ ևս այնքան հիւանդ է, որ չը կարողացան նրան մինչև անգամ հարցեր առաջարկել։ Ասում են որ ատրճանակի զարկը վնասելով նրա ուղեղը այն ազդեցութիւն էլ ունեցել է, որ Նոբելինգ այժմ չէ կարող անսխալ գրել։

Այս օրերս հրատարակվեցաւ պրոֆէսսոր ֆոն Տրայչկէի մի յօդուած, որ և առանձին բրոշիւրի պէս է ծախվում և որի վերնագիրն է «Der Socialismus und der Meuchelmord». Այս յօդուածի մէջ հեղինակը խօսում է այն միջոցների մասին, որք պիտի գործ դրվէին այսպիսի զեղծումների, ինչպէս վերջին ժամանակները պատահողների առաջ առնելու։

Լեզուն և գրելու ձևը միշտ այն է որ այնքան յատուկ է այս յայտնի պատմաբանին և որ զանազանվում է իր վճռողական ձևերով և սաստիկ համոզիչ ոյժով։—Տրայչկէն միշտ սովորութիւն ունի գերմանական ազգի կեանքի նշանաւոր բոպէներում դուրս գալ հրապարակ և իր միտքը յայտնել։ Նա անկասկած շատերի վրա ազդում է իր վառված խօսքով։

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրէժ, 28 յուն.

Մի քանի շաբաթ է որ Դավրէժում յայտնվել է մի մարդ ճգնաւորի անունով. սրան խիստ զօրաւոր են կարծում տեղիս բնակիչների այն մասը որ աւելի անհասկացող են և առաւելապէս լիլավացիք. նրա պատգամախօսութեանը մեծ նշանակութիւն են տալիս, և նրան ընդունում են իբրև երկրորդ Քրիստոս։ Ցիշեալ ճգնաւորը բնակվում է քաղաքիս Լիլավա կոչված արուարձանի հայոց բնակած թաղերից մէկի մէջ, Նանայեան երկսեռ դպրոցին կից մի հին փլված և աւերակ բակում։ Մի քանի օր է, որ ես լսել եմ մեծահամբաւ ճգնաւորի պատգամախօսութիւնները, այս պատճառով հետաքրքրութենից շարժված ցանկացայ անձամբ տեսնել այս սուրբ մարդու դէմքը և լսել նրա կանխասացութիւնները։

Մի կիրակի առաւօտ շատ վաղ վերկենալով, ուղևորվեցի դէպի Լիլավա և կէս ժամից յետոյ հասայ Մահտեսի Գրիգորի (այսպէս է կոչվում ճգնաւորը) բնակութեան տեղը։ Ձեռքս դողդողալով մեկնեցի բնակարանի դրան մուրճին և նրանով մի քանի անգամ թեթև կերպով հարուածեցի։ Գրիչ հարկաւոր էր այնտեղ, որ նը-կարագրէր իմ մարմնիս սաստիկ տատանումը և սրտիս բաբախման ձայնը. երկնչում էի մի գուցէ տանեցիք բարկանալով ինձ վրա անպատուեն ինձ, թէ ինչու համար այնքան վաղ թակում էի նրանց դուռը, և վրդովում էի նրանց առաւօտեան անուշ քունը։ Մի քանի անգամ հարուածելուց յետոյ, ներսից հարցրեցին իմ ով լինելս և երբ տեղեկացան, որ եկել էի ճգնաւորի տեսութեան, չը գիտեմ թէ ճշմարիտ և թէ սուտ ինձ պատասխանեցին թէ տանը չէ, այլ շատ վաղ գնացել է եկեղեցի պատարագին ներկայ գտնվելու համար։

Նոյն օրը երեկոյեան պահուն մի քանի տեղ տեսութիւն անելով լսեցի, որ դարձեալ խօսվում է այդ մեծահռչակ ճգնաւորի և նրա պատգամների մասին. կրկին անգամ գնացի նրա տեսութեանը, և բարեբաղդաբար նրան գտայ տանը։ Նա մի ընդարձակ սենեակում մի փոքրիկ անկողնի վրա նստած և մի բարձի վրա կռթնած էր։ Նրա արտաքին տեսքը թէև այցելուին չէին կարողանում հասկացնել, որ այդ մարդը պէտք է լինէր այն հռչակաւոր ճգնաւորը, որը երկար ժամանակ է մեր քաղաքացիների խօսակցութիւնների նիւթ է դարձել։ Մահտեսուն ողջունելուց յետոյ նստեցի մի տեղ։ Իմ առաջին մտածողութիւնն եղաւ ուշադրութեամբ լսել նրա աղօթքները որով պարապում էր։ Նա խօսում էր աւետարանից, սաղմոսից և այլ զանազան սուրբ գրքերից և յաճախ արտասանում էր մարգարէների, առաքեալների և զանազան մարտիրոսների անունները, այնքան արագ, որ խիստ հմուտ իմացողի համար անհասկանալի էր դառնում։

Ճգնաւորի մազերը երկայն էին և սև ինչպէս աբանոսեա աղնիւ փայտը, յօնքերը կամարակերպ իջնում էին մինչև այտերի ծայրերը, ընչացքը նոյնպէս երկայն և սև էին որպէս գլխի մազերը, իսկ աչքերը կոյր էին, և տարիքը հազիւ թէ 35-ի կարող է հասնել։ Նրա աչքերի կոյր լինելու մասին պատմում են, իբր թէ դորա մայրը միշտ աղջիկ զաւակ է ծնելիս լինում, մի օր գնալով մի ուխտատեղի ուխտ է գնում սըրտում ասելով, թող ինձ մի արու զաւակ չնորհէ տէրն և երկու աչքով էլ կոյր լինի, և ահա նոյն ժամուն յղանում է կինը և ծնվում է այս մանուկը, որ յետոյ ճգնաւոր է դառնում. ինչ հրաշք։

Մոռացայ ձեզ յայտնելու, սիրելի ընթերցող, որ երբ ես մտայ աստուածապաշտ Մահտեսու սենեակը, այնտեղ կային մի քանի կանայք, որոնք եկել էին ճգնաւորից իրանց ապագայի մասին մի բան տեղեկանալու. դրանք բոլորն էլ բաղդախնդիր կանանցից էին։ Սրանցից ոմանք զաւակ չունէին, ոմանք հարստութիւն չունէին, ոմանք տանը աղջիկներ ունէին և պառաւել մնացել էին մարդ չէին առնում, ոմանց ամուսինը հեռաւոր ճանապարհորդութիւն էր գնացած և նրանից լուր չունէին։ Այսպէս հազարաւոր պատճառներ ունեցող մի խումբ կանայք, այժմ նստած են ճգնաւորի սենեակը և աղօթքները ուշի ուշով լսում են։

Այժմ ճգնաւորը իր աղօթքը վերջացրեց մի թեթև մաղթանքով. նոյն միջոցին այն այցելու կանանցից մինը, որ աւելի հասակաւորն էր, մօտեցաւ ճգնաւորին և դրեց նրա ափի մէջ մի կտոր արծաթ և ասաց. «Մահտեսի, լսել էի որ դուք եկել էք, եկայ ձեր տեսութեան». «Բարի լինի ձեր գալուստը, պատասխանեց ճգնաւորը և թող Աստուծոյ օրհնութիւնը լինի ձեր վրա։ Գիտեմ դուք զաւակ չունէք, շարունակեց Մահտեսին, եկել էք իմանալու թէ արդեօք կունենաք այսուհետև»։—Էլ յոյս չունեմ պատասխանեց կինը։ «Ոչ, չէք ունենալու, միամիտ կացէք, և գնա Աստուծոյ հրամանը կատարէ, այսինքն քո ամուսնու հետ ապրիր մինչև որ օրհնած մօտենայ»։ Մի ուրիշ կին առաջ եկաւ, նա ևս հետևեց առաջինի օրինակին։ «Զաւակս, յարեց ճգնաւորը, դու էլ զաւակ չունես, բայց երկու տարուց յետոյ մի աղջիկ կը ծնվի քեզանից և նա ևս չէ մնալու քեզ այլ կը մեռնի», ասաց Մահտեսին։

Մօտեցաւ մի ուրիշ կին և մի բուռն արծաթ լցրուց երիտասարդ մարգարէի ձեռքը, բայց նա մերժեց արծաթը յետ տալով և ասելով. «Առանիծեալ, քո արծաթը ինձ հարկաւոր չէ, ես չեմ ընդունի հազարաւոր խարդախութեամբ վաստակած արծաթը, ես այս ձեզնից առած արծաթները ինձ համար չեմ մխում, այլ ընծայում եմ եկեղեցուն, ուստի եկեղեցու ընծան պէտք է ճշմարտութեամբ վաստակած արծաթ լինի»։ Մօտեցաւ մի ուրիշ կին և նա ևս տուեց ճգնաւորին մի աջահամբոյր, ճգնաւորը ասաց. «Ծնողս քեզ ունես մի աղջիկ որը պառաւել է և ոչ ոք չէ ուզում նրան կնութեան առնել, բայց պառաւութիւն չէ նրան չառնելու պատճառը, այլ նա ունի մի ուրիշ պակասութիւն, որը այսքան բազմութեան մէջ չէ կարելի յայտնել. ուրեմն աղատ թողէք ինձ; որ գնամ աղօթելուս, այս ասաց և վեր բարձրացաւ և ուղևորվեց դէպի եկեղեցի, իսկ այցելուք ցրվեցան։

Հայ ոմն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից յուլիսի 7-ին հեռագրում են եւրոպական լրագիրներին թէ անգլիական երկու զրահաւոր նաւեր հասել են Կիպրոսի ջրերը։

—Էրզրումից յունիսի 20-ին գրված մի նամակից քաղում ենք հետևեալ տողերը։ «Վանից եկած մասնաւոր լուրերից տեղեկացանք որ Շատախի, Մոկսի և Գաւաշի մէջ քուրդերը շատ բարբարոսութիւններ են գործել։ Շատ հայեր այդ երեք գաւառներից եկել լցվել են Վան։ Մանրամասն տեղեկութիւններ չենք կարողացած ունենալ մինչև այժմ, որովհետև Թիւրքաց զօրքերի առաջապահ գունդերը սաստիկ խուզարկութիւններ են անում։»

—Լոնդոնից հաղորդում են յուլիսի 7-ին որ Սեր Նորթկոտ գլխաւոր պահպանողականներից մի ժողով է հրաւիրել հետևեալ օրվայ համար արտաքին գործերի պաշտօնատան մէջ։ Պահպանողական ընկերութիւնները վճռել են որ պատրաստվեն փառաւոր ընդունելութիւն տալ լորդ Բիկոնսֆիլդին Բերլինից վերադարձած ժամանակ։

—Morning Post-ի Բերլինի թղթակիցը հաղորդում է թէ Բոլգարիան, Սերբիան և Բումինիան պարտաւորված են վճարել Թիւրքիայի ունեցած պարտքի մի մասը համեմատութեամբ իրանց վճարած տուրքին պատերազմից առաջ։

—Բերլինից յուլիսի 6-ին գրում են «Indépendance Belge» լրագրին թէ Բերլինում տեղեկութիւն են ստացել որ նոր խռովութիւններ են լինում Կրիտ կղզում։ Թիւրքերը իրանց 6000 զօրքերից կորցրել են 500-ը։ Անգլիական հաւատարմատարները շատ եռանդ չեն ցոյց տալիս յունական շահերը պաշտպանելու համար։

—Կաիրէից հաղորդում են որ Եգիպտոսի խէդիվը երկար դիմադրութենից յետոյ համոզվել է եւրոպական կոմիսարներին ներկայացնել իր և իր ընտանիքի ստացուածների ցուցակը, իր անձնական պարտքի խնդիրը կարգադրելու համար։ Այդ ցուցակը շատ հետաքրքրական կը լինի։

—Բերլինից յուլիսի 9-ին հաղորդում են հետևեալը. «Կոնգրէսի երեկվայ նստում վճռվեցաւ Կոտուրի հարցը։ Պարսից պատգամաւոր Մելքոն խան որ ներկայ էր կոնգրէսին, ընդունեց Կոտուրին Պարսկաստանին յանձնվելու վերաբերեալ պայմանները որոնք կոնգրէսը առաջարկած էր Սան-Ստէֆանոյի դաշնագրի հիման վրա։»

—Բերլինից յուլիսի 9-ին հեռագրած են «Indépendance Belge» լրագրին հետևեալը։ «Փոքր-Ասիայում Թիւրքաց սահմանների և Բաթումի վերաբերեալ վիճաբանութիւնը դեռ չը վերջացաւ այսօր։ Բայց կոնգրէսը որոշակի վճռեց Դունայի և Բալկաններում Բոլգարիայի սահմաններին վերաբերեալ կէտերը։ Այնուհետև վիճաբանվեցաւ հայոց խնդրի վրա որի մասին շատ կարևոր կէտեր որոշվեցան։»

—Կ. Պոլսից յուլիսի 9-ին հաղորդում են որ անգլիական դեսպանատան քարտուղարը գնացել է Կրիտ կղզին։ «Times» լրագրի թղթակից պ. Գալլէնգօ իր գրած պարսաւական յօդուածների համար հրաման ստացել է հեռանալ Թիւրքիայից։

—Մալտայից հաղորդում են յուլիսի 9-ին որ 101-դ, 71-դ և 42 զօրագունդերը որոնք հրաման ստացել են պատրաստվել Կիպրոս կղզին գընալու համար, հնդկական զօրքերից չեն։

ՎՄՇԱԿԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՈՆԴՈՆ, 10/22 յուլիսի։ Պատերազմական մինիստրի շրջաբերականով հրամայված է արձակել պահեստի զօրքերը և միլիցիա մինչև 27 յուլիսի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 25 կ., երկրորդ 96 ր. 25 կ., երրորդ 96 ր. 5 կ. չորրորդ 96 ր.։ Ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 239 ր., երկրորդ 238 ր. 75 կ., արևելեան 95 ր. 55 կ., ոսկի 7 ր. 76 կ.։ Տրամադրութիւնը Բօրսայում ամուր է, բայց հանդարտ է։

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱԶԷՅԱ վիճակագրականների չորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ չորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԽԻՆԱՅԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) $1^1/_4$ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՑԻՏՐԱԴ մագնեզի $1^1/_2$ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ դիւժինը 3 ր., ԳՐԻՉՆԵՐ արղը 15 կ. և բարձր, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 անեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԳԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակինտօշներ, երեխաների չորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօղնօսներ 10 կ. և բարձր, ռոմ, կօնեակ, պորտ-վէյն, խերես և անգլիական օղի $1^1/_2$ ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 կ. և բարձր: Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը:

14—20

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՕԼԵԱՆ հեղուկ և փօշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ $1^1/_2$ ր., ԽԻՆԱՅԻ ԻԻՂ $1^1/_4$ ր., ցետրատ մագնեզիայի 2 ր., ՌՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԷՐԷՍ և անգլիական օղի $1^1/_2$ ր., ճանապարհի ամաններ դիւժինը 3 ր., թէյի գգալներ (չեն սևանում) $1^1/_2$ րուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական չորեր և չը թրջվող վերարկուներ 4 րուբլ և բարձր, գլխարկներ և ժիլէտներ 75 կ. և բարձր, կտաւ 10 ր. և բարձր, տրիկօ 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամազէի 1 ր. արշինը, շղթաներ (Աբիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.: Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆՈՂ անուանված մի դեղ, և այլն:

20—20

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ

ՀԱՑ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ

ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է քաղաքի բնակիչներին, որ գնահատական հարկի 1875 թ. երկրորդ կէսի պակասորդների հաւաքելը Դումայի վճռի համեմատ յանձնած է նահանգական քարտուղար Ալէքսանդր Միխայլովիչ Զաբարովին: Քաղաքային վարչութիւնը հրաւիրում է կալուածատէրերին, որոնք պէտք է վճարեն պակասորդներ, յանձնեն փողը Զաբարովին և նրանից տպած ապահովագիրներ ստանան: Հակառակ դէպքում պ. Զաբարովին իրաւունք է տուած անկանոն հարկատուների հետ վարվել քաղաքային կանոնադր. 131 յօդ. համեմատ: Թիֆլիսի գլխաւոր պ. Պօլեցմէյստերին յայտնած է, որ նա գործակցէ պ. Զաբարովին հարկաւոր դէպքում: Այն կալուածների ցուցակը, որոնք պէտք է պակասորդը վճարեն, պակասորդների քանակութիւնը իւրաքանչիւր կալուածից և տուգանքները վարչութեան անդամի ստորագրութեամբ յանձնված են պ. Զաբարովին: Պ. Զաբարով փողեր կընդունի իր գրասենեակում, որ գտնվում է քաղաքային վարչութեան տան մէջ, առաւօտեան 9—12 ժամը: Պ. Զաբարովի բացակայութեան ժամանակ փողը կարելի է մոցնել վարչութեան գանձարանը:

3—3

ՀԱՒԱՔՈՒՄ ԵՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ որոնց նշանակութիւնը և արժանաւորութիւնը մեր ազգի համար մանրամասն կը բացատրեմ իր ժամանակին: Առ այժմ 300-ի չափ հաւաքած ունենալով՝ դիմում եմ դէպի մեր բանասէրները խոնարհաբար խնդրելով աւելի մօտ ծանօթալ ժողովրդի հետ, նրանցից հաւաքեն և ուղարկեն ինձ մանաւանդ բուն ազգային հանելուկները, որոնց հետ պէտք է լինի հանելուկների ԴԺՈՒԱՐ ԲԱՌԵՐԻ ԵՒ ՄՏՔԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ: Աշխատութիւնը չը խնայեցողների անունը և ազգանունները կը տպագրուին գրքում և կուղարկվեն նրանց համար մի մի օրինակ ձրի:

Գրիգոր քահանայ Մանդակունի:

Իմ հասցէն՝ Тифлисъ. Авлабаръ. священику Теръ Григору Мандакуни.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ յայտնում է, որ Քաղաքային բժշկական հիմնարկութիւնների կանոնադրութեան բժշկական բաժնի կանոնների 83 համեմատ հիւանդները ընդունվում են հիւանդանոցում ամեն օր, ամառ 7-ից, իսկ ձմեռը 8-ից մինչև 10 ժամը, բացի այն դէպքերից, երբ ընդունելութիւնը չէ կարելի յետաձգել:

2—3

Երևանայ սուրբ ԳԱՅԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ երեք դասատան համար հարկաւոր են մի ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթական 24 դասով ռուսաց լեզուից երկրորդ դասատնում, թուաբանութենից, աշխարհագրութենից և ընդհանուր պատմութենից, և մի ԿԱՐԳԻՉԱՀ ՎԱՐԺՈՒՀԻ շաբաթական 16 դասով ռուսաց լեզուից պատրաստական և առաջին դասատուների և ձեռագործութեան համար իւրաքանչիւրը տարեկան 500 րուբլ ռոճիկով. ցանկացողները թո՛ղ շտապեն յայտնել դպրոցի տեսչութեան այս հասցէով.—Въ Эривань Протоіерею Іосифу Мелянцу.

2—3

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

ՅՈՒԼԻՍԻ 12. Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յուլիսի 11-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պոլուիմպերիալը)	8	58
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1300	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը աժէ 112 գլ.	121	—
Դուբեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	7	80
» միւս տեսակը.	7	70
» չաքարաւազը.	6	20
» տրանզիտը. .	6	50
» մաքուր վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը Թուշի . . .	8	—
» Թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	20
Մոմը բնաճարպի (стеар.)	13	20
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիվանի . . .	22	--
» մարտինկոյինը	20	—

ՀՆՈՒԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, որը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9^1/_2$ մինչև 11 ժամ առաւօտեան: Բժշկապետ Աւանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Րիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Րիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ:

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան:

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային:

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրօնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակստ վեներական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր:

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հիւանդութիւններ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Ս. Պ. Ստացանք պակասորդ 3 րուբլ:

—ԼԱԳՕԴԵԽ. Ս. Մ. Յ. Ստացանք 6 րուբլ, կուղարկենք «Մշակ» յուլիսի 1-ի համարներից:

—ՉԱՅԻՄ (Ղարսի մօտ). Ա. Գ. Կարդացէք վերևի պատասխանը:

—ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ. Մ. Խ. Կարդացէք վերևի պատասխանը:

—ԳԱՆՁԱԿ. Մ. Ղ. Ստացանք 8 ր. 15 կ. յօգուտ Արարատեան ընկերութեան: Լուրը տպեցինք:

—ՆԱԼՉԻԿ. Տ. Տ. Ա. Ստացանք 5 րուբլ: Կարդացէք «Մշակի» յայտարարութիւնը:

—ՄՕՍԿՎԱ. Ս. Գ. Ստացանք 10 ր. պ. Վ. Հ.—Զ.-ի տարեկան բաժանորդագինը:

Дозволено Цензурою 11 Іюля 1878 г. Тифлисъ

Типографія Мартиросіанца

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ